

С ԿԻՏԱՄԻՆ

դեղի կիրառման հրահանգ
(տեղեկատվություն սպառողների համար)

Միջազգային չպատենտավորված անվանումը՝

Ascorbic acide (ասկորբինաթթու):

Քիմիական անվանումը՝

-լակտոն, 2,3-դեհիդրո-L-հուլոնաթթու:

Բաղադրությունն ու թողարկման ձևերը

Ասկորբինաթթվի 50մգ/1մլ, 100մգ/2մլ, 250մգ/5մլ ներարկման լուծույթ, փաթեթավորման մեջ 10-ական ամպուլ:

Դեղաբանական ազդեցությունը

С վիտամինը մասնակցում է օքսիդացման ու վերականգնման կենսապրոցեսներին: Ներբջջային հիմնական նյութի, պրոկոլագենի և կոլագենի սինթեզի և պահպանման հիմնական բաղադրամասն է: Օրգանիզմում օքսիդացվում է դեհիդրոասկորբինաթթվի և ազդում թիրոզինի, ֆենիլալանինի, նորադրենալինի նյութափոխանակության և որոշ ֆերմենտային համակարգերի վրա, ազդում է նաև ֆուլաթթուն ֆոլինաթթվի ձևափոխվելու, ածխաջրերի նյութափոխանակության, վարակների նկատմամբ օրգանիզմի կայունության, բջջային շնչառության, լիպիդների, սպիտակուցների, կարնիտինների, ստերոիդների սինթեզի, իմունային ֆունկցիայի վրա:

Դեղակինետիկան

С վիտամինը լայնորեն տեղաբաշխվում է հյուսվածքներում և նյութափոխանակվում ցարդում: С վիտամինն ու դրա արգասիքներն արտազատվում են մեզով:

Ցուցումները

- С վիտամինի պակասորդի կանխում և բուժում,
 - երկաթապակասորդային սակավարյունության ժամանակ երկաթի պատրաստուկների հետ և իդիոպաթային մեթեմոգլոբինարյունության ժամանակ որպես օժանդակ միջոց:
- Վարակիչ հիբվանդություններ, թունահարում, լյարդի հիվանդություններ, դանդաղ ապաքինվող վերքեր, ոսկրակոտրվածքներ, դիստրոֆիա, ծանր ֆիզիկական աշխատանք, մտավոր լարվածություն, հղիություն, կրծքով կերակրում:

Դեղաչափումը

Ներքին ընդունում ուտելուց հետո: Կանխարգելիչ նպատակով (ծնեռ-գարուն ժամանակաշրջան, քերի սնվել) օրը 50-100 մգ (երեխաներին օրը 25 մգ), հղիության և կրծքով կերակրման ժամանակ օրը 300 մգ 10-15 օրվա ընթացքում, այնուհետև՝ օրը 100 մգ, բուժական նպատակներով՝ օրը 100-200 մգ (երեխաներին օրը 50-100 մգ): Մ/մ, ն/ե ներարկումներ՝ 5%-ոց լուծույթի 1-5 մլ, թունավորումների ժամանակ մինչև 60 մլ: Առավելագույն դեղաչափն է 1-2 գ-ը:

Գերդեղաչափումը

ՍԱՀ-ի լորձաթաղանթի գրգռում (սրտխառնոց, փսխում, փորլուծություն), միզուղիներում քարագոյացում, ցինկի, պղնձի փոխանակության խանգարում, ԿՆՀ-ի գերդրդվածություն, քնի խանգարում, մանրանոթային ախտահարում:

Կողմնակի ազդեցությունները

- Մեծ դեղաչափերից փորլուծություն, մեզի թթվեցման արդյունքում քարագոյացմամբ օքսալատների կամ ուրատների նստվածքագոյացում,
- միջնկանային ներարկման ժամանակ ներարկման տեղում ժամանակավոր թեթև ցավ,
- արագ ներերակային ներարկումը կարող է առաջացնել ժա-

... 2-3 գ դեղաչափի տևական կիրառումից լնդախտի (ցինգա) արտանիշներ:

Հակացուցումները

Ասկորբինաթթվի նկատմամբ բարձրազգայնություն:

Հատուկ հրահանգներ

online-apteka.am

Չպետք է նշանակել մեծ դեղաչափեր արյան խթանված մակարդամամբ, թրոմբոֆլեբիտով և թրոմբոզին, հոդատապին հակված և շաքարախտով հիվանդներին: Դրանց տևական ընդունման արդյունքում հնարավոր է ենթաստամոքսագեղձի ինսուլային ապարատի ֆունկցիայի ընկճում, ուստի բուժման ընթացքում անհրաժեշտ է կանոնավոր հսկել գեղձի ֆունկցիոնալ վիճակը: Մեծ դեղաչափերով բուժման ժամանակ կորտիկոստերոիդային հորմոնների գոյացման վրա ասկորբինաթթվի խթանիչ ազդեցության նկատառումով անհրաժեշտ է մտադրել երբեմնակց ֆունկցիային և զարկերակային ճնշմանը:

Ասկորբինաթթուն որպես վերականգնիչ կարող է աղավաղել տարբեր լաբորատորային ցուցանիշներ արյան մեջ գլյուկոզի, բիլիռուբինի մակարդակը, լյարդային տրանսամինազների, լակտատ րոհիդրոգենազի ակտիվությունը:

Հղիություն, կրծով կերակրում

Մեծ դեղաչափերը կարող են հանգեցնել նորածնի լնդախտին: Արտազատվում է կրծքի կաթով, սակայն նորմալ դեղաչափերի ամենօրյա ընդունման դեպքում ոչ նի խստիոր չի ծագում:

Փոխազդեցությունը

Ասկորբինաթթվի ներծծումը թուլանում է հորմոնային բեղմնական-խիչների միաժամանակ ընդունման դեպքում: Հիմնային ընպելիքը, թարմ մրգային կամ բանջարեղենային հյութերը թուլացնում են դրաներծծումը: Ասկորբինաթթուն խթանում է պենիցիլինի ներծծումը, թուլացնում հակամակարոնիչների ազդեցությունը, մեծացնում սալիցիլտների նշանակման ժամանակ բյուրեղամիզության վտանգ: Դեֆերոքսամինով բուժման սկզբում C վիտամինի նշանակումը կարող է ուժեղացնել սրտի վրա երկաթի թունայնությունը:

Նախազուշացում

Ասկորբինաթթուն ուժեղացնում է երկաթապակասորդային վիճակներում երկաթի ներծծումը: Միևնույն ներարկչում դեղագիտորեն անհամատեղելի է B12 վիտամինի հետ: C վիտամինի ներարկումներն անհամատեղելի են նաև կալիումական աղի և G պենիցիլինի հետ:

Դեղատնից բացթողման կարգը

Դեղատոմսով:

Պահման պայմանները

Լույսից պաշտպանված տեղում:

Պիտանիության ժամկետը

1,5 տարի:

Արտադրող՝

«Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ, Հայաստան 0040, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք, թիվ 6: Հեռ./ֆաքս. + (374 10) 62 74 10, հեռ. 61 87 29: